600.0352.18.09.19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2019 թվականի №352Ա
քաղ. Երևան

### «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ներդրումային ծրագիրը՝ բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ, կազմում է 55,7 մլն ՀՀ դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՐԼՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
18 սեպտեմբերի 2019 թ.